ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ՋԱՆ ՆԱԳԱՇՅԱՆԻՆ «Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՋԱՏ ՋԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ՃԱՆ ՆԱԳԱՇԵԱՆ, ՈՐ Ի ՆԻՒ ՋԵՐՍԻ, ԱՄՆ

ԱՄՆ հայոց Արեւելեան թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամեանից գոհունակութեամբ տեղեկացանք բարի եւ մեծարժէք բազում գործերով արդիւնաւորուած եկեղեցաշէն ու ազգօգուտ Ձեր երկարամեայ ծառայութեան մասին:

Վաթսուն տարիներ ի վեր Դուք անձնուիրաբար ծառայել էք Նիւ Ջերսիի Սրբոց Ղեւոնդեանց եկեղեցուն՝ որպէս Երիտասարդաց կազմակերպութեան վարիչ, Ծխական Խորհրդի անդամ ու ատենապետ: Ձեր ջանքերի եւ կատարած նուիրատուութիւնների շնորհիւ ընդարձակուել է Սրբոց Ղեւոնդեանց եկեղեցու կալուածքը, գնուել նոր հողատարածք, համայնքային կեանքում իրականացուել աստուածահաճոյ այլ ծրագրեր՝ ծառայելով մեր ժողովրդի բարեպաշտ զաւակներին:

Հայրենի մեր երկիրն ու Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին առաւել շէն ու պայծառ տեսնելու որդիական նախանձախնդրութիւնը եւ զոհողութեան ու նուիրաբերումի ոգին Ձեր անունը ծանօթ ու սիրելի են դարձրել նաեւ Մայր Հայրենիքում: Ձեր նիւթական աջակցութիւնը ի նպաստ Աշոցքի եկեղեցու վերանորոգութեան, ինչպէս նաեւ մեծագումար մասնակցութիւնը հայրենաբնակ ծնողազուրկ երեխաների սոցիալական խնդիրների լուծման ձեռնարկին մխիթարութիւն են պարգեւում բազում հայորդիների, ովքեր հանապազ աղօթքով Տիրոջ օրհնութիւնն ու զօրակցութիւնն են հայցում Ձեզ եւ Ձեր ընտանեաց անդամներին:

Հայրապետիս համար մեծ ուրախութիւն է, որ Սրբոց Ղեւոնդեանց եկեղեցու հոգեւոր դասը, վարչական պաշտօնէութիւնն ու բարեպաշտ հաւատացեալները ազնիւ ցանկութիւն ունեն պատուելու եւ մեծարելու Ձեզ՝ մեր Սուրբ Եկեղեցու կեանքում բերած Ձեր գնահատելի աւանդի համար: ԱՄՆ Մեր վերջին այցելութեան ընթացքում Մենք նոյնպէս ականատեսը եղանք այն սիրուն ու յարգանքին, որը վայելում էք Դուք արժանիօրէն:

Ձեր ծառայութեանց ու վաստակի բարձր գնահատանքով յղում ենք Ձեզ Մեր օրհնութիւնը եւ Հայրապետական այսու Կոնդակով, ընդառաջ Առաջնորդ Սրբազանի ազնիւ խընդ-

ռանքին, շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն շքանշանը:

Վստահ ենք, որ Դուք նոյն նախանձախնդրութեամբ ու սիրով պիտի շարունակէք Ձեր ծառայութիւնը մատուցել մեր Սուրբ Եկեղեցուն ու հաւատաւոր ժողովրդին:

Ի խորոց սրտի Մեր աղօթքն ու բարի մաղթանքն է, որ Բարձրեալ Տէրը Սուրբ Գրիգոր Լուսաւորչի բարեխօսութեամբ հանապազ զօրավիգ ու աջակից լինի Ձեզ ու Ձեր ընտանեաց անդամներին՝ պարգեւելով քաջառողջ երկար կեանք, երջանկութիւն եւ գործոց մշտանորոգ յաջողութիւններ:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնք. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 23-ն Ապրիլի
Ցամի Տեառն 2003 եւ ի թուին հայոց ՌՆԾԲ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 159